«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/10252

«03» 10 2025թ.

**«ԱՔՍԵԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՇԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան.

Համաձայն 2025 թվականի ապրիլի 18-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «ԱՔՍԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված շինանյութերի մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2025/7-2-ԵՊԲՀ-15» պայմանագրի՝ «ԱՔՍԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից երեսուն օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրում ներառված թիվ 62-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ 10 (տասը) հատ «Տնտեսող լամպեր»:

Վերը նշված ժամկետը լրացել է 18.05.2025 թվականին:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը՝ 23.09.2025 թվականին «ԱՔՍԵԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գրությամբ տրամադրել է լրացուցիչ 3 (երեք) օրյա ժամկետ՝ պայմանագրով նախատեսված ապրանքը մատակարարելու համար, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ ԱՐԱՅԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Կատարող՝ Էդ.Ադիլխանյան,
010-301-000 (430)